

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶ

ՎԱՐԴԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Գալուստ Ավետիսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23 ղեկտեմբերի 2016 թվականի թիվ
45-Ն որոշմամբ

ՎԱՐԴԱՔԱՐ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ղոջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	9
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	10
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	Error! Bookmark not defined.
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	11
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	Error! Bookmark not defined.
4. ՀՀԶՄ ֆինանսավորում	Error! Bookmark not defined.
5. ՀՀԶՄ մոնիթորինգ.....	15

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Յոթ տարիների փաստացի կատարած աշխատանքը և նվիրումը լիարժեք առիթ է ստեղծում ասելու, որ կատարվել է անհնարինը՝ համայնքին նոր շունչ տալու համար: Ազգաբնակչության խնդիրներով և հոգսերով ապրելը, յուրաքանչյուր բնակչի խոսքը լսելի դարձնելը և դրանց կատարումը, այսօր դարձել է տեսանելի: Ստացված և գնահատված աշխատանքն է, որ առաջացնում է ոգևորություն և ձգտում ավելիին հասնելու, նոր նպատակներ իրականացնելու: Մակայն այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է ամենօրյա լրջագույն աշխատանք, իրազեկվածություն, համայնքում առակա խնդիրները հաղթահարելու և խելամիտ լուծումներ գտնելու համար:

Հնգամյա ծրագիրը հանդիսանալու է հինգ տարիների ընթացքում որպես աշխատանքային ուղեցույց:

Վարդաքար գյուղական համայնքի ղեկավար Գալուստ Ավետիսյան

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վարդաքար գյուղը գտնվում է Շիրակի դաշտավայրում, ծովի մակարդակից 1620 մ. Բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1828-1829 թթ Արևմտյան Հայաստանի Ղարս, Վան, Մշո գավառներից տեղահանված գաղթականների կողմից: Գյուղը անվանվել է Թումառդաշ: Հետագայում գյուղը վերանվանվել է Վարդաքար: Վարդաքարի եկեղեցին կառուցվել է գյուղի հիմնադրման տարիներին և համարվում է պատմամշակույթային կոթող: Այն վերակառուցվել 1995թ –ին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 945,33 հեկտար: Կլիմայական պայմանները բարենպաստ են հացահատիկային մշակաբույսերի բանջարաբուստանային կուլտուրաների արտադրության համար: Համայնքի առկաբնակչության թիվը կազմում է 818 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 420 և կանայք՝ 398:

Աղյուսակ 1. Համայնքի առկաբնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	818
	Տղամարդիկ	420
	Կանայք	398
	0-4 տարեկան	37
	5-6 տարեկան	15
	7-10 տարեկան	29
	11-14 տարեկան	36
	15-17 տարեկան	28
	18-22 տարեկան	61
	23-45 տարեկան	285
	46-62 տարեկան	235
	63 և բարձր տարիքի	92
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	84
	Տարիքային և աշխատանքային	34
3.	Փախստականներ	
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	2
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	3
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	14
9.	Մանկուց հաշմանդամներ	5
10.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում	37

	գրանցված ընտանիքների թիվը	
11.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	
12.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	17
13.	Անօթևան ընտանիքներ	
14.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	45
15.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	150
16.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	200

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքը աչքի է ընկնում կրթական բարձր մակարդակով: Ուսանողության թիվը կազմում է 47 մարդ : Գործում է մեկ միջնակարգ դպրոց , որը ունի առանձին, բոլորովին նոր շենք, նախատեսված է հարյուր աշակերտների համար: Դպրոցն ունի նոր գույք : Դպրոց են հաճախում 100 աշակերտ, աշխատում են 24 մարդ: **Աղյուսակ -2**

**Աղյուսակ -2: Վարդաքար համայնքում գործող միջնակարգ դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ
01.01.2016 թվականի դրությամբ**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝ Մանկավարժներ	24 20
2.	Աշակերտների թիվը	100

Համայնքի բյուջեի միջոցներով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ „Վերջի գանգ,, „Սեպտեմբերի մեկ,, երեխաների տոնը ավելի ուրախ և հիշարժան դարձնելու համար:

Համայնքը ունի մանկապարտեզի մասնաշենք, որը չի գործում: Մասնաշենքը գտնվում է վթարային վիճակում: Մասնաշենքը ունի ջեռուցման, ինչպես նաև նոր գույքով համալրման կարիք: Ներկայումս

նախնական պայմանավորվածություն ունենք „Կարիտաս,, ԲՀԿ-ի հետ մասնաշենքը հիմնանորոգելու նոր գույքով ապահովելու վերաբերյալ:

Համայնքում մշտապես կազմակերպվում են գեղեցիկ միջոցառումներ՝ հունվարի 28, ապրիլի 7, մայիսի 9, ամանորյա և այլն, որին ակտիվ մասնակցում են դպրոցի աշակերտները, համայնքի բնակիչները: Ամանորին համայնքի բյուջեի միջոցներով զարդարվում է ամբողջ գյուղը, որի աշխատանքներին ակտիվ մասնակցում են հոկապես համայնքի երիտասարդ բնակիչները: Համայնքում գործում է եկեղեցին, որտեղ անցկացվում են քրիստոնեական բոլոր ծիսակատարությունները, մատուցվում են պատարագներ, կատարվում է պսակադություն և կնունք: Կարելի է հպարտությամբ ասել, որ ունենք վերանորոգված, հոյակերտ եկեղեցի:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը նորացված, հագեցած է ժամանակակից աշխատանքային տեխնիկայով:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի նիստով: Աշխատակազմերի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը **աղյուսակ 3-ում**,

Աղյուսակ 3: Համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով և անձաձևակազմով)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՅՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
	Համայնքի ղեկավար	1	1	165000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	130000
	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	123000
	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	113000

	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	1	98000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
	Հավաքարար	1	1	80000
	Ընդամենը	6	6	544000

Համայնքը գազաֆիկացված է: Համայնքի հեռախոսակապը իրականացվում է ֆիքսված կապի միջոցով, գործում են նաև «ԲիԼայն», «ՎիվաՍել» և «ՅՈՒ Բոմ» բջջային ցանցերը, ապահովված է ինտերնետ կապով: Համայնքում գործում է << Հայփոստ>> -ի մասնաճյուղը իր առանձին շենքով չնայած այն բանի, որ վերջինս չի գտնվում համայնքի գույքի հաշվեկշռում, բայց գտնվում է շատ վատ վիճակում, որտեղ անհնար է մատուցել որակյալ ծառայություններ: Զբաղվածության մակարդակը միջինից ցածր է: Չկա հիմնական աշխատանք: Համայնքում արտագնա աշխատանքի մեկնողների թիվը բավականին մեծ է: Համայնքի ընտանեական նպաստների համակարգում հաշվառված են 45 ընտանիք:

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժկետ, որը տեղակայված է գյուղապետարանի մասնաշենքում: Վերանորոգված է և գտնվում է բարվոք վիճակում, ջեռուցվում է էլեկտրաէներգիայով: Ամբուլատորիան ապահովված է առաջին բուժօնության անհարժեշտ պարագաներով: Աշխատում է Լբուժ. ֆույր, ժամանակին և բարեխղճորեն անցկացվում են երեխաների բոլոր պատվաստումները: Գյուղապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

- Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնականում մշակվում են հացահատիկային մշակբույսեր և կերային կուլտուրաներ: Հողատարածքների դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության համար: Հացահատիկային կուլտուրաների, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությունը և անասնապահությունը հանդիսանում են Վարդաքար համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող գործոնները: Սակայն այս ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որի պատճառներից է ռոտզման ջրի սակավությունը և ներքին ցանցի քայքայվածությունը, գյուղատնտեսական արտադրության ապրանքների սպառման շուկայի բացակայությունը, դեռ ԽՍՀՄ-ի տարիներին արտադրված ու մինչև օրս շահագործվող գյուղ. տեխնիկայի մաշվածությունը, ինչպես նաև ցրտահարությունը և կարկտահարությունը: Անասնապահությամբ զբաղվող խոշոր ֆերմերային տնտեսություններ համայնքում չկան, իսկ միջին ֆերմերային տնտեսությունների թիվը հասնում է ութի :

Աղյուսակ 5: Համայնքի հողային հաշվեկշիռը

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը ամայնքում
1.	Համայնքի վարչական տարածքը (հա), որից՝	945,33
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա), այդ թվում՝	712,82
	Արոտավայր	102,78
	Վարելահողեր	597,10
	Խոտհարք	
	Պտղատու այգի	12,94
	Այլ հողեր	
3.	Բնակավայրերի հողեր (հա), որից՝	89,34
	Բնակելի կառուցապատման	66,88
	Հասարակական կառուցապատման	1,67
	Խառը կառուցապատման	
	Ընդհանուր օգտագործման	9,19
	Այլ հողեր	11,60
4.	Արտադրական նշանակության հողեր (հա)	16,40
5.	Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակառուցվածքի հողեր (հա)	6,20
6.	Անտառային հողեր (հա)	
7.	Հատուկ պահպանության հողեր (հա)	1,52
8.	Հատուկ նշանակության հողեր (հա)	16,27
9.	Ջրային հողեր (հա)	102,78

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել ծրագրեր, որոնք կլուծեն համայնքի զարգացման խնդիրները

- 1) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
- 2) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.
- 3) նպաստել մշակույթի, առողջապահական օջախների նորմալ գործունեությանը
- 4)) նպաստել մշակույթի, առողջապահական, նախակրթական օջախների նորմալ գործունեությանը
- 5) համայնքում՝ զարգացնել գյուղատնտեսությունը .
- 6) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ
- 7) գերեզմանատան պարսպապատում, բարեկարգում
- 8) փողոցների լուսավորում
- 9) ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի

2.5. նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Աղյուսակ 6: Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն

	2016	2017	2018	2019	2020
Հազ. դրամ	18512.0	18927.6	20456.5	22967.5	54392.0

ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%)

	2016	2017	2018	2019	2020
Հազ. դրամ	18512.0	18927.6	20456.5	22967.5	54392.0
սեփական եկամուտների բաժինը (%)	24.0	25.0	23.0	20.5	19.3

2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքում խոչընդոտող գործոնները հետևյալն են

- Արտագաղթը սոցյալ տնտեսական վիճակի, անհետաքրքիր մշակութային կյանքի, տարբեր բնագավառներում (սպորտ, արվեստ և այլն) միջոցների բացակայության պատճառով հաջողություններ չունենալու պատճառով
- Սակավ աշխատույժ՝ ցածր ծնելիության մակարդակի, հիվանդաբեր, աղտոտված մթնոլորտի պատճառով մահացության թվի աճի և արտագնա աշխատանքի մեկնողների տարեցտարի մեծացող՝ քանակության պատճառով:
- Ֆինանսական միջոցների սակավությունը
- Արտադրվող ապրանքների իրացման շուկաների բացակայությունը, ինքնարժեքների ցածր գները և սակավ աշխատուժը
- Ծայրամասային մարզերում կառավարության և տնտեսվարող սյուբեկտների անուշադրությունը

2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- **Համայնքի ուժեղ կողմեր**
 - ✓ Բուժկետի առկայություն
 - ✓ <<Վարդաքարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի առկայություն
 - ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածություն
 - ✓ Ածխարագրական դիրքը
- **Համայնքի թույլ կողմեր**
 - ✓ Աշխատատեղերի պակաս
 - ✓ Համայնքի ենթակառուցվածքների՝ (փողոցներ՝ երկրորդական և երրորդական, Ոռոգման ենթակառուցվածքի ցանց, համայնքային ենթակառուցվածքային տակգտնվող շենք-շինություններ) ոչբավարարվիճակ
 - ✓ Բնական աղետներ՝ երկրաշարժ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հեղեղներ և ջրհեղեղներ
- **Հնարավորություններ**
 - ✓ Գյուղատնտեսական մթերքների վերամշակման, արտադրության խթանման, ընդլայնման և զարգացման հնարավորություն
 - ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացում
 - ✓ Արտադրության խթանում, զարգացում

- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

- **Սպառնալիքներ**

- ✓ Բնական, տարերային աղետների անկանխատեսելի պատճառած վնասներ
- ✓ Գործազրկության մակարդակ իաճող տեմպ
- ✓ Արտագաղթ՝ հատկապես երիտասարդ ընտանիքների

2.8. Համայնքի զարգացման տեսլական

Վարդաքարի համայնքը սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է՝ հաշվի առնվելով գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների, ոլորտները, ինչպես նաև ազգաբնակչության պոտենցիալ հնարավորությունները:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը**՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով, գյուղը դարձնել առավել բարեկարգ և մաքուր:

3. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Ծրագիր 1. Համայքում կազմակերպել աղբահանություն, տեղադրել աղբամաններ

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Նախատեսվում է տեղադրել աղբամաններ, կազմակերպել աղբահանություն

ծրագիրն իրականացնել 2017-2018 թվականների ընթացքում

Ծրագրի ֆինանսական միջոցներ

Նախնական մոտավոր հաշվարկներով աշխատանքների արժեքը կկազմի մոտ 3.0 միլիոն դրամ: Տեղական բյուջե

Ծրագիր 2. Համայնքի փողոցների լուսավորում

Նախատեսվում է համայնքի փողոցների լուսավորում

ծրագիրն իրականացնել 2018-2019 թվականների ընթացքում

Ծրագրի ֆինանսական միջոցներ

Նախնական մոտավոր հաշվարկներով աշխատանքների արժեքը կկազմի մոտ 4.0 միլիոն դրամ:
Տեղական բյուջե

Ծրագիր 3. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

Նախատեսվում է համայնքի ներհամայնքային փողոցների փոսալցում, բարեկարգում

ծրագիրն իրականացնել 2018-2019 թվականների ընթացքում

Նախնական մոտավոր հաշվարկներով աշխատանքների արժեքը կկազմի մոտ 2.0 միլիոն դրամ:
Տեղական բյուջե

Ծրագիր 4. Մանկապարտեզի շենքի վերանորոգում

Նախատեսվում է վերակառուցել մանկապարտեզի շենքը, ունենալ բարեկարգ շենք, կբացվեն նոր աշխատատեղեր:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով կառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 10.0 միլիոն դրամ: Տեղական բյուջեից կկատարվի 15% ներդրում, իսկ 85% կապահովվի / Կարիտաս /:

Ծրագիրն իրականացնել 2017-2018 թվականների ընթացքում

Ծրագիր 5. Կարկտակայանների ձեռք բերում տեղադրում

Նախատեսվում է ձեռք բերել 2 կարկտակայան, որոնք էապես կփոխեն գյուղատնտեսության զարգացման ընթացքը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով կարկտակայանների ձեռք բերման արժեքը կկազմի մոտ 16.0 միլիոն դրամ: Տեղական բյուջեից կկատարվի 15% ներդրում, իսկ 85% կապահովվի:

Ծրագիրն իրականացնել 2019-2021 թվականների ընթացքում

4 ՀՀԶԾ ֆինանսավորում

Առաջնահերթ ծրագրերի ընտրություն, համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերի կազմում

Ըստ ոլորտների ծրագրերը գնահատվել են ըստ առաջնահերթության: Այնուհետև, ընտրվել այն ծրագրերը որոնք խիստ կարևոր են համայնքի հետագա զարգացման համար: Գալիք 5 տարվա կանխատեսումների շրջանակներում բաժին հասնող ֆինանսական միջոցները՝ 5 տարվա կտրվածքով տվյալ բաժնին հասնող ֆինանսական միջոցների գումարի չափը որոշելու համար՝

- Որոշվել է գալիք 5 տարիների կտրվածքով համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի չափը, որը նախատեսվում է ծախսել պլանավորվող 5 տարիների ընթացքում՝ 95 մլն. 700 հազար դրամ
- Գնահատված ընդհանուր մուտքերից հանվել են 5 տարվա ընթացքում պարտադիր իրականացվող ծրագրերի համար անհրաժեշտ գումարները՝ 40 մլն. դրամ, ինչպես նաև առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի գծով համայնքի բյուջեից հատկացվող համաֆինանսավորման գումարները՝ 11 մլն. դրամ:

3. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփելի համաձայն ՀՀԶԾ հավելված 3-ում բերված ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրի:

Եթե մեկին դրի լուծման համար հրականացվելու են մեկից ավելի ծրագրեր, մոնիթորինգի անձնագիրը կազմելը ստանձնում են ծրագրերի:

Խոշորացված համայնքների համար մոնիթորինգային պլանպեյք է սահմանել ամեն քննակավայրի համար:

Ճավառահնարահմանահանուհուհու: